ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 04

ԱՐՏԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ «ԳԼՈԲՈՒՍ ՇԻՆ» ՍՊԸ, «ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ և ԱՇԻԿՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ ՍՊԸ ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄ -Ի ՄԻՋԵՎ 30 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՀ-ԲՄԱՇՁԲ-24/116 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԿՆՔՎԱԾ «ՀՀ ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՅԳԻՆԵՐԻ, ՊՈՒՐԱԿՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ /ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ, ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ/» ԾՐԱԳՐԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՅԳԵՊԱՏ,ՔԱՂՑՐԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՊՈՒՐԱԿՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ N ԱՄԱՀ-ԲՄԱՇՁԲ-24/116-2 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Արտաշատ «27» մայիս 2026թ.

«Արտաշատի համայնքապետարան»-ը, ի դեմս համայնքի ղեկավարի պարտականություններ կատարող Ս.Մկրտչյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, «ԳԼՈԲՈՒՍ ՇԻՆ» ՍՊԸ, «ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ և ԱՇԻԿՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ ՍՊԸ կոնսորցիում-ը ի դեմս Աշիկյան Քոնսթրաքշն ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Արտակ Աշիկյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա /այսուհետ՝ Կապալառու/ մյուս կողմից, այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և հիմք ընդունելով 2025 թվականի հոկտեմբերի 30-ին կնքված N ԱՄԱՀ-ԲՄԱՇՁԲ-24/116-2 գնման պայմանագրի /այսուհետ Պայմանագիր/ 8.5. և 8.8. կետերը, ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 56–րդ կետի 3-րդ ենթակետը, պատասխանատու ստորաբաժանման 2026 թվականի մայիսի 26-ի արտահերթ նիստի արձանագրությամբ /մտից Ա-7996/ կայացած որոշումները կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Արտաշատի համայնքապետարանի և «ԳԼՈԲՈՒՍ ՇԻՆ» ՍՊԸ, «ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ և ԱՇԻԿՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ ՍՊԸ կոնսորցիում -ի միջև կնքված N ԱՄԱՀ-ԲՄԱՇՁԲ-24/116-2 ծածկագրով «***ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի այգիների, պուրակների կառուցում /բարեկարգում, վերանորոգում/» շինարարական աշխատանքներ կատարում Արտաշատ համայնքի Այգեպատ, , Քաղցրաշեն բնակավայրերում այգիների բարեկարգման աշխատանքներ»*** պայմանագրի կատարման ծավալաթերթ-նախահաշվում կատարել ծավալների փոփոխություն ըստ փոփոխված ծավալների համադրման ակտի:

1.2. Աշխատանքի վճարումը կատարվում է ընդունման հանձնման արձանագրության, կատարողական ակտերի հիման վրա:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում կնքման պահից, որը գործում է մինչև կողմերի կողմից պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման ավարտը և հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի կողմից պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 1 /մեկ/ էջից, փոփոխված ծավալների ակտ՝ 11 /տասնմեկ/ էջից, հայերեն լեզվով, 2 /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և տրվում են կողմերին:

3.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Արտաշատի համայնքապետարան
Հասցե՝ Ք. Արտաշատ Օգոստոսի 23/62
ՀՎՀՀ՝ 04240737
Բանկ՝ ՀՀ ՖՆ Գործառնական Վարչություն
Հ/Հ՝ 900412151517
Համայնքի ղեկավարի պարտականություններ
կատարող՝ Ս.Մկրտչյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԱՇԻԿՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ
Հասցե՝ Ք. Արտաշատ Օրբելի 19 Ա
ՀՎՀՀ՝ 04250937
Բանկ՝ Արդշինբանկ ՓԲԸ
Հ/Հ՝ 2475505742860000
Տնօրեն՝ Ա. Աշիկյան

/ստորագրություն/
Կ.Տ